

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 1-ին Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Դասարանի ծնողական խորհրդի` նախագահի և անդամների ընտրություն:
2. Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումների հարցը:
3. Ընթացիկ հարցեր: Դասարանի ծնողական խորհրդի` նախագահի և անդամների ընտրություն:

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի` նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասվար Լ.Բաբայանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, ծանոթացավ ծնողների հետ և ասաց, որ չորս տարի համագործակցելու են իրար հետ, և շատ է ցանկանում, որ այդ համագործակցությունն ընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Ընկեր Սարգսյանը նշեց նաև, որ ձևավորելու են ծնողական խորհուրդ` նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով`

1. Հակոբյան Սոնա
2. Մովսեսյան Շուշան
3. Սարգսյան Հայարիփի
4. Կարապետյան Մերի
5. Մարտիրոսյան Կարինե

Ակտիվ քվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Հակոբյան Սոնան:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասվարին:

2. Լսեցին.- Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումներ կատարելու հարցը:

Դասվար Լ. Բաբայանը ծնողներին ծանոթացրեց <<Տաք սնունդ>> ծրագրին: Նա ասաց, թե ինչ սննդամթերք է ընդգրկված այդ ծրագրի շրջանակներում, որը բավարար չէ այն ռացիոնալ կազմակերպելու համար: Անհրաժեշտ է նաև ծնողական աջակցություն և ծնողական ներդրումներ: Ուսուցչուհին ասաց, որ այդ ներդրումները լինելու են 300 դրամի սահմանում: Գումարները տնօրինելու են յուրաքանչյուր դասարանից ընտրված ծնողները:

Որոշեցին.- Հավաքել 300-ական դրամ և այդ աշխատանքը հանձնարարել ծնողական խորհրդի անդամ Մովսեսյան Շուշանին:

Լսեցին.-Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/:

Լ. Բաբայանը ծանոթացրեց դպրոցական ռեժիմին: Ծնողներին ներկայացրեց իրենց երեխաների շաբաթական ծանրաբեռվածությանը/20 ժամ/, 1-ին դասարանում ուսումնասիրվող առարկաներն ու դասավանդող ուսուցիչներին:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները, հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին, մշտական կապ պահպանել դասվարի և դպրոցի հետ:

Ժողովի նախագահ՝

Քարտուղար՝

Սոնա Հակոբյան

Շուշան Մովսեսյան

